յերկարիլ վիճին և չգտանել Հայոց օգնութիւն յուստեքէ, առաքեցին յԵգիպտոս զՏէր Յովհաննէս, Ալան եւ զԱստուածատուր, առ Մարկոս Պատրիարքն Գպտոց, և յայտ արարին նմա զբռնութիւնս Յունաց, եւ զկսրուստ իրաւանցն Հապէշաց։ Այլ նորա չկարացեալ առնել զայլ ինչ։ 'ի դատարանի տեղւոյն վկայիւք հաստատեաց Գպտոց եւ Հապէշաց լինել հետեւող ազգին Հայոց, և էառ Հէօճճէթ 'ի դատաւորէն, և վճիռ 'ի չորից դենպետաց, և զնոյն ինքն զԱստուածատուր Պատրիարք Հայոց՝ օրինօք դատարանի կարգեաց լինել փոխանորդ ազգին Հապէշաց։ յանձն արարեալ նմա զվանօրայս զկալուածս և զբաժին տեղիս 'ի տաճարին Ս։ Յարութեան, եւ յայլ Ս։ Տեղիս։ լուցանել զկանթեղս և զմոմս, կատարել զսովորական թափորն եւ զպաշտամունս նոցա։ Ժողովել զհասս կալուածոց և տընտեսել զամենայն գործս նոցա, ցընորութիւն նոր վերատեսչին Հապէշաց, եւ կարգել զձեռս Յունաց 'ի վիճակէ նոցին, զի 'ի ժամանակէ անտի մեծին Օմարայ երկոքին ազգքն հետեւակք են ազգին Հայոց։

Թէպէտեւ հասին այսոքիկ դրեանք յԵրուսաղէմ, եւ Հայք մատուցին զնոսա յատեան դատաւորին, բայց չկարացին շահել ինչ։ զի այլազգիք հակեալ 'ի կողմն Յունաց, ոչ կամեցան ունկն մատուցանել բանիցն Հայոց։ Տեսեալ Աստուածատուր Պատրիարքի թէ կորոյս զսեփհականութիւնս Հապէշաց, և նստելով յԵրուսաղէմ չկարէ շահել ինչ։ յուզի անկեալ չոքաւ 'ի Կոստանդինուպոլիս աշակերտովք իւրովք (1656)։ Եւ անկեալ 'ի դրունս գլխաւորացն Հայոց՝ խնդրէր օգնութիւն 'ի նոցանէ։ բայց նոքա ոչ ինչ նպաստեցին նմա։ զի կային պատաղեալ զաղմկաւ իւրեանց։

Իսկ Մարինոս Մալիայի որ եկն յԵրուսաղէմ վերատեսուչ Լատին վանաց (1652)։ և 'ի նոյն ամի Լատինք կառուցանէին զնոր շինուածս 'ի վանս իւրեանց, յոր սակս կրեցին բազում նեղութիւնս յայլազգեաց՝ այլ իմն եղանակաւ պատմէ 'ի գիրս իւր։ «Վերջապէս յամին 1653 Պատրիարքունք Յունաց և Հայոց, և նոյն ինքն Մարինոս տեսուչն Լատինաց, չոքան 'ի Խաչափանքն Յունաց։ և 'ի գիշերին յայնմիկ խոյս եառն յաւանն Ռեմէ եւ ապա